

ՆՈՅԵՄԲԵՐ 2019

**ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ ՓԲԸ»



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում /Երևան/	5
1.1.2. Ջրամատակարարման համակարգի կառավարում /Մարզեր/	7
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	12
1.3. Ջրահեռացման համակարգ	12
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	13
1.5. Էներգահամակարգ	13
1.6. Մեքենա-մեխանիզմներ	14
2. Առևտրային տնօրինություններ	16
2.1. Բաժանորդների տվյալներ	17
2.2. Հասույթ	17
2.3. Գանձում	19
2.4. Դեբիտորական պարտքեր	19
2.5. Ջրաչափեր	21
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	22
3. Տեխնիկական տնօրինություն	23
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	24
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	25
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	27
3.4. Ջրատար համակարգի բարելավում	28
3.5. Գոտիավորման ջրի հաշվառման խումբ	30
3.6 Խմելու ջրի մաքրման կայաններ	31
4. Լրատվական ծառայություն	33
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	35
5.1. Փաստաթղթերի մշակում	36
5.2. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն	36
5.3. Դասընթացներ	36
5.4. Համագործակցություն	37
5.5. ՀՀ ԱԻ և ԶՊ միջոցառումներ	38
5.6. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	38
5.7. Այլ աշխատանքներ	39
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	40
6.1. Ինտերակտիվ համակարգ	40
6.2 Այլ աշխատանքներ	43

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ




1.1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ /ԵՐԵՎԱՆ/

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Քաղաք Երևան




● «Արևելք» ՍՍ «Հյուսիս». տեղամասի աշխատակիցների կողմից «Բիոքիմիայի ինտիտուտի» հարևանությամբ Գյուրջյան փողոցով անցնող $D=300$ մմ պողպատե խողովակի վրա հայտնաբերվել և մոտ 1մ երկարությամբ ճեղքի գոդման միջոցով վերացվել է գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 12լ/վ ջրաքանակ: Միաժամանակ վթարային վիճակում գտնվող $D=300$ մմ պողպատե խողովակի $L=100$ մ երկարությամբ հատվածը ներթափանցման միջոցով փոխարինվել է $d=90$ մմ պոլիէթիլենային խողովակով:



● Երևանի «Հաղթանակ» թաղամասի ջրամատակարարման շարունակականության բարելավմանն ուղղված աշխատանքները շարունակելու նպատակով գոտիավորման աշխատանքների ժամանակ հայտնաբերված և վերացված գաղտնի վթարների արդյունքում թաղամասում ճնշումները բարձրացել էին թույլատրելի սահմանից ավել: Այդ պատճառով թաղամասը սնող ընդհանուր ջրագծի վրա տեղամասի կողմից տեղադրվել է $D=200$ մմ ճնշման կարգավորիչ փական: Արդյունքում նվազեցվել են ավելցուկային ճնշումները, իսկ թաղամասի ջրամատակարարումը դարձել 17 ժամ:





● Արաբկիր թաղամասի Ն. Զարյան, Արաբկիր 41 և 43 փողոցների ջրամատակարարման ցանցում ուսումնասիրություններ և կարգավորումներ կատարելու նպատակով տեղադրվել են գիշերային ծախսաչափեր, որոնց տվյալների վերլուծությունից և կորեթի ուսումնասիրությունից պարզ է դառնում արդյոք ցանցում վթարներն առկա են կամ բացակայում են: Այնուհետև իրականացված գոտիավորման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է 2 վթար: Արդյունքում ցանցում բարձրացել է ջրի ճնշումը: Ճնշումները կարգավորելու և թույլատրելիին համապատասխանեցնելու նպատակով Ն. Զարյան փողոցի $D=200$ մմ ջրագծի վրա տեղադրվել է $D=100$ մմ ՃԿԲ:



● Ջրամատակարարման գոտիներ մտած ջրաքանակների հաշվառման և վթարների հայտնաբերման նպատակով գիշերային ծախսերն ուսումնասիրելու համար ուլտրաձայնային հոսքաչափեր են տեղադրվել նաև Կենտրոնի «Չարենց», Արաբկիրի «11», Ավանի «Դուրյան», Վանաձորի մաքրման կայանի «Չուխաջյան», Գյումրիի «3.1», «Մուշ», Սևանի «Նաիրյան», Արտաշատի «գ. Նորշեն» գոտիների գլխամասերում, ինչպես նաև դրանց ենթագոտիներում:

Մի քանիսի սխեմատիկ պատկերները ներկայացված են ստորև.



● **Կենտրոն.** Փ. Վարդանանց 28-ում, փ. Շահինյանում, Ա. Մանուկյանում և Սարի Թաղ 10 շարքում իրականացված վթարաորոնդական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է 4 վթար Q≈18լ/վ:



Վարդանանց փողոց



Ա. Մանուկյան փողոց

● **Հարավ.** Արին Բերդի 16-ում իրականացված վթարաորոնողական աշխատանքների, չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է վթար Q≈5լ/վ ջուր:



● **Էրեբունի.** Նուբարաշեն-Էրեբունի խաչմերուկում իրականացված վթարաորոնողական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է վթար Q≈1.5լ/վ ջուր:



● **Հյուսիս.** Նորքի 6-րդ զանգվածի Շոպրոն փողոցում, Ավանի Դուրյան թաղամասում իրականացված վթարաորոնողական աշխատանքների, չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է թվով 2 վթար Q≈19լ/վ ջուր:



Շոպրոն փողոց



Դուրյան թաղամաս

1.1.2. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ /ՄԱՐԶԵՐ/

Կոտայքի մարզ

● Արամուս համայնքի Երիտասարդական 5-րդ փողոցում տեղամասի աշխատակիցների կողմից համայնքապետարանի աջակցությամբ, կառուցվել է պոլիէթիլենային խողովակներով D=50մմ, D=63մմ և D=75մմ L= 678մ երկարությամբ ջրագիծ: Նոր կառուցված ջրագծից իրականացվել է թվով 18 բաժանորդների մուտքագծերի միացումներ և սահմանագատման կետում տեղադրվել է թվով 18 D=15մմ ջրաչափ: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է քայքայված D=80մմ ջրագծի L=480մ երկարությամբ հատվածը, կարգավորվել է բնականոն ջրամատակարարումը և տնտեսվել է 5լ/վ ջրաքանակ:



Սյունիքի մարզ

● «Միսիան» տեղամասի աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունների և չափումների արդյունքում պարզ է դարձել, որ Իսրայել Օրի 1բ բազմաբնակարան շենքի տակով անցնող $d=300$ մմ ջրագիծը գտնվում է խիստ վթարային վիճակում, ինչի հետևանքով առկա է ջրակորուստ, ինչպես նաև խափանված է Որոտան 8 բազմաբնակարան շենքերի մոտ տեղադրված փականային հանգույցը: Տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է Իսրայել Օրի 1բ շենքը շրջանցող $d=200$ մմ և $d=250$ մմ $L=123$ մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ, հիմնովին վերակառուցվել է շենքի հարևանությամբ գտնվող դիտահորը, և շահագործումից հանվել է $d=300$ մմ $L=60$ մ վթարային վիճակում գտնվող ջրագիծը:

● Որոտան 8 շենքի հարևանությամբ գտնվող և կապալառու կազմակերպության կողմից վերակառուցված թվով 2 դիտահորերում տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է $d=150$ մմ թվով 2 անսարք փական: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, ինչպիսիք է մոտ 30լ/վ ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:



Գեղարքունիքի մարզ

● **Քաղաք Սևան.** Գագարինական թաղամասը սնող $d=150$ մմ- 250 մմ ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում, առկա էին բազմաթիվ վթարներ և ապօրինի միացումներ, ինչի հետևանքով ջրի ճնշումը անբավարար էր և առաջացնում էր բնակիչ-բաժանորդների բողոքը: «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից խցափակման միջոցով շահագործումից հանվել է $d=150$ մմ- 250 մմ $L=210$ մ երկարությամբ քայքայված, հետագա շահագործման համար ոչ պիտանի ջրագիծը: Արդյունքում տնտեսվել է 6 լ/վ ջրաքանակ, ցանցում ճնշումը կարգավորվել է, վերացել են ապօրինի միացումները:





● **Ք. Մարտունիի Ն. Գետաշենում, Ք.Սևան Վարսեր, Ջրառատավան, գյուղերում և Վարդենիս Զոդի ջրագծի վրա** իրականացված վթարարոնողական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է 5 վթար $Q \approx 23,5$ լ/վ: Գագարին ավանում շահագործումից հանվել են $d=250$ մմ, $L=125$ մ և $d=150$ մմ, $L=85$ մ խողովակներ, որոնց վրա առկա էին 5լ/վ քանակությամբ գաղտնի վթարներ և ապօրինի միացումներ: Աշխատանքներից հետո Գագարինավանում տնտեսվել է $Q \approx 3$ լ/վ ջրաքանակ:

Գագարինավան


Գեղարքունիքի մարզի Գագարինավան և Կոտայքի մարզի Ջրառատավան համայնքներում նախկինում ջրամատակարարումն իրականացվել է գրաֆիկով:

● Գագարինավանում գոտիավորման բաժնի կողմից իրականացված վթարադրոնադակայան աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել է 5լ/վ արտահոսքով վթար: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վթարը գտնվում էր ջրագծի վրա, որից սնվող բաժանորդ չկար, ինչպես նաև նշված ջրագծից առկա էին բազմաթիվ ապօրինի միացումներ: Նշված ջրագիծը շահագործումից հանելու արդյունքում ($d=250$ մմ $L=125$ մ) տնտեսվեց 4լ/վ ջրաքանակ, ինչի արդյունքում կատարելով ճնշման կարգավորումներ, հնարավոր է դարձել Գագարինավանում և Ջրառատավանում ապահովել 24-ժամյա ջրամատակարարում:



● «Վարդենիս» տեղամասի աշխատակիցների կողմից Մախարովի փողոցով անցնող $d=100$ մմ $L=80$ մ երկարությամբ քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է $d=50$ մմ և $d=63$ մմ պոլիէթիլենային խողովակներով, իրականացվել են թվով 11 բնակիչ-բաժանորդի միացումներ նոր կառուցված ջրագծից: Կատարված աշխատանքների արդյունքում կարգավորվել է բնականոն ջրամատակարարումը և խնայվել է 5լ/վ ջրաքանակ:

● Վարդենիսում գտնվող գորմասին օժանդակելու, ջրամատակարարումը բարելավելու նպատակով տարածքում իրականացվել են լայնածավալ գոտիավորման և վթարավերացման աշխատանքներ: Հայտնաբերվել է 3 գաղտնի վթար՝ ընդհանուր $Q=11$ լ/վ ջրաքանակով, որոնք անմիջապես վերացվել են տեղամասի կողմից: Հայտնաբերված և վերացված վթարների արդյունքում հնարավոր է դարձել փոխարինել գորմասի տարածքում գործող պոմպակայանի 22 ԿՎտ հզորությամբ պոմպը 7.5 կՎտ հզորությամբ պոմպով, որի արդյունքում տնտեսվել է նաև էլեկտրաէներգիա: Այժմ պոմպը մղում է $Q=10$ լ/վ ջրաքանակ նախկին $Q=21$ լ/վ-ի փոխարեն:



Քաղաք Արարատ



Արարատյան փողոց

Յեմենտի գործարանի տարածք

● Ք.Վեդի Արարատյան 12, Յեմենտի գործարանի հասցեներում և Տափերական գյուղում իրականացված վթարաորոնողական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է 7 վթար $Q \approx 20$ լ/վ:



Գյուղ Տափերական



Հ.Մանուկյան փողոց

Քաղաք Արտաշատ

● Մխչյան, Բերքանուշ, Գետազատ գյուղերում, Վ.Դվինի Շիրակացի 19, Հովհան Եփեսեցի 8, Կոնստանային Սիմոնով 3, Մելքոնյան 9 և Թումանյան հասցեներում իրականացված վթարաորոնողական աշխատանքների և չափումների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է թվով 9 վթար $Q \approx 12$ լ/վ:



Գ.Գետազատ



Վ.Դվին փ.Շիրակացի



Գ.Մխչյան



Գ.Բերքանուշ

Արևավորի մարզ

● Մերձավան համայնքում ջրամատակարարումն իրականացվում էր 4 ժամյա գրաֆիկով, առավոտյան և երեկոյան 2-ական ժամ՝ ՕԿՁ-ի չոր խցում տեղադրված 2 խումբ, հզոր (2 x 5 կՎտ և 15 կՎտ) պոմպերի միջոցով: Ջրամատակարարման տևողությունն ավելացնելու նպատակով կատարվեցին լայնածավալ գոտիավորման աշխատանքներ և տրվեցին ինժեներական ինժեներական լուծումներ: ՕԿՁ-ում տեղադրված մակարդակաչափի, տարբեր ջրագծերի վրա տեղադրված ճնշման լոգերների տվյալների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ հնարավոր է գյուղում իրականացնել շուրջօրյա ջրամատակարարում: Տեղադրվել են նոր փականներ, իսկ հզոր պոմպակայանի փոխարեն 2 հատ 5 հարկանի շենքերի մոտ իրականացվել է բակային պոմպակայանի մոնտաժում, որտեղ տեղադրվեց 2.2 կՎտ հոգորությամբ 1 պոմպ: Չնայած այն հանգանամբին, որ դեռ գյուղում իրականացվում են գոտիավորման և վթարավորոնողական աշխատանքներ, այժմ գյուղի արդեն իսկ 90% տարածքի ջրամատակարարումը բարելավվել է և դարձել 24-ժամյա:



Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	448
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	27,796
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	13,260
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	3,030
Ջրաչափական հանգույցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	13
Շահագործումից հանված ջրագիծ	մ	5,898.2
Կառուցված ջրագիծ	մ	3,395.1
Կառուցված կոյուղագիծ	մ	459
Վերացված գաղտնի վթարներ	հատ	45
Փոխարինված փական	հատ	269
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	352
Մաքրված դիտահոր	հատ	349
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	59.12
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	2,211
Ջրահեռացման ցանցում	հատ	4,080
Պոմպակայաններում	հատ	265
Մաքրված անձրևընդունիչ	հատ	1,016

Նոյեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	636	1346	474

1.2. ԶՐԱԶԱՓԵՐԻ ՓՈՒՆԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է նոյեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	308	8	2	0	0	0	0	1	0	318
Փոխարինված	172	31	5	4	0	2	0	0	1	215
Տեղափոխված	3	2	0	0	0	0	0	0	0	5
Տեխ. Ակտ	167	86	17	1	1	2	0	0	0	274
Ընդամենը	650	127	24	5	1	4	0	1	1	813

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 813 ջրաչափ: Կատարված աշխատանքների 79,95 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	2160	536	48
2	Մաշտոց	1755	654	8
3	Շահումյան	1330	321	9
4	Զեյթուն	400	352	12
5	Շիրակ	565	461	52
6	Ալավերդի	1380	29	18
7	Ապարան	0	44	0
8	Արթիկ	80	232	0
9	Աշոցք	220	26	0
10	Բերդ	0	17	9
11	Իջևան	495	34	48
12	Լոռի	2198	188	8
13	Նոյեմբերյան	480	35	6
14	Սպիտակ	0	25	12
15	Ստեփանավան	0	46	0
16	Թալին	0	23	6
17	Տաշիր	240	10	0
18	Էջմիածին	0	550	0
19	Չարենցավան	500	382	0
20	Աբովյան	2410	111	0
21	Հրազդան	1990	269	0
22	Աշտարակ	2247	19	0
23	Կենտրոն	150	303	12
24	Հյուսիս	60	247	25
25	Հարավ	0	368	0
26	Էրեբունի	0	164	0
27	Արմավիր	0	117	0
28	Արտաշատ	0	81	0
29	Արարատ	0	81	0
30	Մասիս	0	48	0
31	Գավառ	840	37	0
32	Սևան	0	59	0
33	Մարտունի	0	23	0
34	Վարդենիս	0	9	0

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի ըվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	հատ	գծ/մ
35	Ճամբարակ	0	10	0
36	Դիլիջան	0	38	150
37	Վայք	0	15	0
38	Եղեգնաձոր	0	7	0
39	Ջերմուկ	0	15	0
40	Սիսիան	0	69	30
41	Գորիս	0	26	0
42	Կապան	0	66	6
43	Մեղրի	0	29	0
	Ընդամենը	19500	6176	459

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Սևանի N3 կոյուղու պոմպակայանում մաքրվել են խցանված հակադարձ փականները:
 - Դիլիջանի կոյուղու մաքրման կայանում իրականացվել է մանր տիդմի ճաղավանդակի քերիչ սանրերի կարգաբերում, ուսումնասիրվել են օդամուղերը և բոլոր կոնվեյերները:
 - Վարդենիսի կոյուղու մաքրման կայանում իրականացվել է պոմպերի աշխատանքային վիճակի ուսումնասիրություն, ստուգվել է պոմպերի շարժիչներում ջրի առկայությունը, յուղի պարունակությունը, առանցքակալների որակը, մալուխների հերմետիկությունը: Ստուգվել և մաքրվել են հակադարձ փականները:
 - Սևանի N3 կոյուղու պոմպակայանում մաքրվել են խցանված հակադարձ փականները:
 - Մարտունի կոյուղու մաքրման կայանում կարգավորվել է խափանված արտաքին լուսավորությունը: Ստուգվել են բոլոր սարքավորումները:
- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	74,006	19,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	87,090	28,8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	180,922	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	137,019	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	107,176	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	14,021	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,462	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	20,200	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	24,700	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	1,100	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՍՏԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայաններում իրականացվել են պոմպային ագրեգատների և էլ. սարքավորումների թվով 192 սպասարկման և նորոգման աշխատանքներ:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԿԱՆԻՉՍՆԵՐ

Նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Արևելք» ՍՏ կողմից շահագործվող մեքենա-մեխանիզմների պատշաճ շահագործման համար նոյեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:



Թվով 7 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուլանները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 17 անվաղողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Փոխարինվել են թվով 132 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, անտիֆրիզ և գտիչներ:

Թվով 6 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Նորոգվել է թվով 2 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են աստաճանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 10

մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, աստաճանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկներ, սատելիտներ:

Թվով 3 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկներ:

Թվով 2 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման մղիչներ և ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 6 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 2 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 3 մեքենամեխանիզմների վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարների ժամանակին վերացմանը:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Ս.թ. ապրիլից կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՄՏՍՏ սպասարկման տարածքներից Աբովյան, Էջմիածին, Մասիս և Ապարան տեղամասերը դարձան ԵՏՍՏ սպասարկման տարածքներ մոտ 65,000 բաժանորդներով:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 259, իսկ ՄՏՍՏ-ում՝ 60 պայմանագրային աշխատակից: 01.12.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում՝ 327,705, իսկ ՄՏՍՏ-ում՝ 172,232 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - 2019թ. նոյեմբեր ամիսների ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	429,633	314,707	73,3
		Իրավաբանական անձ	20,159	12,998	64,5
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	202,569	165,732	81,8
		Իրավաբանական անձ	8,340	6,500	77,9
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	632,202	480,439	75,99
		Իրավաբանական անձ	28,499	19,498	68,42

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	463,314	370,675	80,0
		Իրավաբանական անձ	23,256	16,517	71,0
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	255,952	202,569	79,1
		Իրավաբանական անձ	10,330	8,340	80,7
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	719,266	573,244	79,70
		Իրավաբանական անձ	33,586	24,857	74,01

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 416 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 227 նոր բաժանորդ: ԵՏՍՏ տեղամասերում նոյեմբեր ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 21,500 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 6 տոկոս, իսկ ՄՏՍՏ տեղամասերում աճել է 7,736 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 4 տոկոս:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակարգ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և տեղափոխվել են բաժանորդների տարածքից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Նոյեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 3,180, իսկ ՄՏՍՏ-ում՝ 661 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 10.2019
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	1,947	1,017	131	3,095
		Իրավաբանական անձ	39	43	3	85
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	276	253	43	572
		Իրավաբանական անձ	47	33	9	89
	Ընդամենը		2,309	1,346	186	3,841

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՏՍ-ում նույնիսկ ամսվա ընթացքում փոխարինված 3,180 ջրաչափերի մոտ 38 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՏՍ-ում փոխարինված 661 ջրաչափերի մոտ 51 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՏՍ-ի մոտավ 65,580 մ3, իսկ ՄՏՏՍ-ի՝ 39,634 մ3 վերահաշվարկված հասույթ (60.44 % Երևան և 33.56 % մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Նոյեմբեր ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1,490,737 մլն դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 473,225 մլն դրամ: Նախորդ ամսվա ձևավորած հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Նոյեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 124 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 16.1 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 97 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.0 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2019թ.		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		2017-2019 թթ. ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
5107	655367260	4446	369444244	98	12497141	5467	801365897	2301	185905841

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 87,06 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 12,94 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Նոյեմբեր ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին.

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14. 897. 386
2	Ազատաշեն համայնք	12. 511. 000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11. 440. 944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114. 597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2. 680. 006. 883 ՀՀ դրամ:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.11.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում հոկտեմբեր ամսվա հատույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,012.4	1,435.4
Բնակիչ-բաժանորդներ	2,887.3	945.5
Իրավաբանական անձեր	1,125.1	489.9
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,797.3	486.4
Բնակիչ-բաժանորդներ	1,384.3	357.3
Իրավաբանական անձեր	413.0	129.1
Ընդամենը, այդ թվում	11.619.40	3843.60
Բնակիչ-բաժանորդներ	4271.6	1302.8
Իրավաբանական անձեր	1538.1	619


Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 164.8 մլն դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2019 թ.դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.12.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	449,337	369,477	82.2	22,575	16,511	73.1
	Առանց ջրաչափի	13,977	1,208	8.6	681	6	0.9
Մարզեր	Ջրաչափով	232,714	172,849	74.28	9,609	7,005	72.90
	Առանց ջրաչափի	21,604	1,348	6.24	240	5	2.08
Ընդամենը	Ջրաչափով	682,051	542,326	79.51	32,184	23,516	73.07
	Առանց ջրաչափի	35,581	2,556	7.18	921	11	1.19

Տվյալների բազայում 01.12.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	587,945	291,234	49.53	25,482	6,105	23.9
Մարզեր	266,230	71,546	26.87	10,882	1,915	17.60
Ընդամենը	854,175	362,780	42.47	36,364	8,020	22.05

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4,689, իսկ մարզերում՝ 1601 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 165, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 503 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2273	1808	79.9
գ.Պոռշյան	1534	991	64.8
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5314	1475	27.7

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Նոյեմբեր ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 6,241, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,659, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 578, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 992, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 602, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 492 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 668 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	184	99,059	16,760,975
Մարզեր	159	59,694	9,757,028
Ընդամենը	343	158,753	26,518,003

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի նոյեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.4 %, ինչը 0.1%-ով ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:




Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են 27 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ձնշման լոգերների գրաֆիկները.





Մ.թ. նոյեմբեր ամսին Շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից նորոգվել են 25 հատ SebaKMT Se-balogD տիպի ճնշումային լոգերներ, ապա դրանք գրանցվել են SCADA համակարգում, որը թույլ է տալիս օնլայն եղանակով հետևել համակարգի ճնշումներին և հեշտացնում է վթարաորոնողական, գոտիավորման և կարգավորման աշխատանքները:

Հաշվետու ամսվա ընթացքում գոտիներում ջրաքանակների ուսումնասիրության և հոսակորուստների հայտնաբերման համար 10 հասցեներում տեղադրվել են Seba UDM-200 տիպի հոսքաչափեր:

Ստորև ներկայացված են տեղադրված հոսքաչափերի հասցեները և կորուստներ ունեցող գոտիների գրաֆիկները.


Հ/Հ	Մասնաճյուղ	ՇՏ	Հոսքաչափի տեղադրման հասցեն
1	Արևմուտք	Էջմիածին	Չարենց - Խորենացի խաչմերուկ
2	Արևմուտք	Էջմիածին	Էջմիածին քաղաքի մուտքագիծ
3	Արևելք	Էրեբունի	Սարի թաղ. - Վարդաշեն
4	Արևմուտք	Շահումյան	գ. Մերձավան
5	Արևելք	Շենգավիթ	ԱՄՆ դեսպանատան մոտ
6	Արևելք	Շենգավիթ	ԱՄՆ դեսպանատան մոտ
7	Արևելք	Կենտրոն	Նար-Դոս փողոց
8	Արևելք	Կենտրոն	Չարենց փ.
9	Արևելք	Կենտրոն	Սայաթ - Նովա փողոց
10	Արևելք	Կենտրոն	Չորաղբյուր կապտաժ
11	Արևելք	Արտաշատ	գ. Նորաշեն
12	Արևմուտք	Արաբկիր	Նաիրի Զարյան փողոց
13	Արևմուտք	Գյումրի	2-րդ գոտի 1-ին միացում
14	Արևմուտք	Գյումրի	2-րդ գոտի Մարմաշենի խճուղի



3.2. ԷԼԵԿՏՐՈԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 10594 ԿՎտ.ժ. (2,06%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՅ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքր յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 85 հասցե, և 4 պոմպակայաններում հայտնաբերվել և վերացվել են թերություններ:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 4337,89 ԿՎտ.ժ կամ 16,6%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 3746 ԿՎտ.ժ կամ 9,8%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:


Շիրակ



Հաշվետու ժամանակահատվածում 23 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


● Նոյեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 277,932 ԿՎտ.ժ կամ 49,71% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 11,460 ԿՎտ.ժ կամ 0,59%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը ավելացել է 266,609 ԿՎտ.ժ կամ 7,33%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են Նոյեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Բնտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	124
«Բնտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	28
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	105
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	23
Մոդելավորման աշխատանքներ	հատ	9
Ա.1 ձևաչափով քարտեզների տպում և տրամադրում	հատ	4
Վթարային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	3
Պլանային ջրանջատումներ (համայնքների քանակ)	հատ	10
Երևան քաղաքի կոյուղագծերի թվայնացում	մետր	183921,861
Գյուղերի ջրամատակարարման ցանցի թվայնացում	գլուխ	1
Կառուցված ջրագծեր	մետր	913
Շահագործումից հանված ջրագծեր	մետր	890,5
Կառուցված կոյուղագծեր	մետր	189
Շահագործումից հանված կոյուղագծեր	մետր	171
Հիդրանտների թվայնացում	վարչական շրջան	4

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրատար համակարգերի կարգավորման խմբի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները:

Սպիտակ. Ուսումնասիրվել են Սպիտակ քաղաքը սնող Չախկալի աղբյուրների մի մասը, որի ընթացքում պարզվել է, որ աղբյուրներից դուրս եկող խողովակները խցանվել են քարերով, որի պատճառով ջուրը թափվում է գետակի մեջ: Ջրատարի մեջ ևս հայտնաբերվել է խցանում, որը վերացվել է D=150մմ:



Էջմիածին. Էջմիածին տեղամասի սպասարկման տակ գտնվող Այգեկ գյուղում բողոքներ են հնչել ջրամատակարարման վերաբերյալ: Չափվել է ջրատարի տարածքում բոլոր ջրօգտագործողների ջրաքանակները, որի արդյունքում հայտնաբերվել է մեկ գաղտնի վթար $\approx 10\text{լ/վ}$, իսկ Այգեկ գյուղի ջրագծի վրա չափվել են ճնշումները և կատարվել են օդահանման աշխատանքներ: Այս ամենից հետո դեպի Այգեկ գնացող ջրաքանակի խնդիրը կարգավորվել է:



Նոյեմբերյան. Նոյեմբերյան քաղաքը սնող Գիծ սարի աղբյուրներից եկող ջրաքանակի բացակայության պատճառով վերոնշյալ աղբյուրներում ուսումնասիրություններ են կատարվել, որոնց ընթացքում պարզվել է, որ երաշտի պատճառով աղբյուրները համարյա ցամաքել են, ջրաքանակը կազմում է (ընդամենը 3.5լ/վ), որն էլ օգտագործվում է անասնապահների կողմից:





Կապան. Կատարվել է Չանախչի ՋՄԿ-ից դեպի Կապան գնացող ջրատարի ուսումնասիրություն, որի ընթացքում հայտնաբերվել են մի քանի վթարներ՝ գումարային 5լ/վ: Ինչպես նաև ուսումնասիրություններ են կատարվել Չանախչի ՋՄԿ-ում: Պարզվել է, որ ՋՄԿ է մտնում 60լ/վ ջուր և չաշխատող փականների պատճառով առաջանում է մաքրած ջրի արտահոսք՝ ≈ 15 լ/վ:

Արզական-Չովունի. Արզական-Չովունի ջրատարի վրա հայտնաբերվել և վերացվել են երկու վթարներ՝ գումարային 5լ/վ արտահոսքով: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են ապօրինություններ Արզնի 2, Ապարան ջրատարների վրա:



Բազմադրյուր-Ղազարավան ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել են վթարներ:

3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԶՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՈՒՄԲ

«Արևելք» և «Արևմուտք» ՇՏ-ների շուրջ 51 գոտիներում ծախսաչափերի օգնությամբ կատարվել են ջրաքանակի, էլեկտրագիայի և կորուստների հաշվառման աշխատանքներ:

- Հնտրված գոտիներում ամենօրյա կարգով կատարվել է ջրի հաշվառում:
- Հնթացիկ ամսում երկու անգամ կատարվել են Պոռչյան և Քասախ գյուղերի ջրաքանակների չափման աշխատանքներ:
- Հնթացիկ ամսում Քանաքեռ ՀԷԿ Բանավան գոտում կատարվել են ֆիզիկական և իրավաբանական բաժանորդների, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքագծերի ջրաչափերի ստուգում:
- Հնթացիկ ամսում Դավիթաշեն 4-րդ թաղամասում կատարվել են բազմաբնակարան շենքերի մուտքագծերի ջրաչափերի ստուգում:
- Ստուգայց է կատարվել Արամվիրի մարզի Խանջյան գյուղ:

Ստուգայցերի արդյունքում պարզվել է հետևյալը.

- 19 ջրաչափ չունեն հողգորաֆ կնիք:
- 2 ջրաչափ չունեն ՉԱԻ կնիք:
- 19 ջրաչափ գտնվում են անսարք վիճակում:
- 58 ջրաչափի ցուցմունք չի երևում:
- Կա առանց ջրաչափի 1 միացում:
- Շուրջ 3 հորում ջրաչափից առաջ առկա է վթար:
- 8 ջրաչափ փաստված է:



Քանաքեռ ՀԷԿ 2 ջ.





Քանաքեռ ՀԷԿ 7 ջ.



Քանաքեռ ՀԷԿ 1 և 2 շենքերի խաչմերուկ



Քանաքեռ ՀԷԿ 4/1 շենք



3.6 ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ

● Լոռի խմելու ջրի մաքրման կայանում փոխարինվել է 21 (d=80-400 մմ) և վերանորոգվել անսարք վիճակում գտնվող 9 հատ փական (իրականացված աշխատանքների շնորհիվ կայանում արագ գործողության ֆիլտրերը և կախված նստվածքով պարզարանները լիարժեք շահագործվում են ըստ անհրաժեշտության):



Անսարք փականների փոխարինման և վերանորոգման աշխատանքներ



Polydos 412 - լուծույթ պատրաստող սարքավորում

Դոզավորման պոմպ

● Լոռի» խմելու ջրի մաքրման կայանում կառուցվել է ռեագենտի տնտեսության սենյակ, որում մոնտաժվել է նոր կոագուլավորման Պոլիդոս համակարգ և համալրվել մշակվող ջրի մաքրման պրոցեսի համար անհրաժեշտ դոզավորման սարքավորումներով:

● Տեղադրվել է 2 նոր ջրամղիչ պոմպ, ֆիլտրերի լվացման համար (հների փոխարեն), հնարավորություն ստեղծելով էլեկտրաէներգիայի տնտեսման:




Ֆիլտրերի լվացման ջրամբար ջուր մղող պոմպեր



Փոխարինված խողովակաշարեր

● Փոխարինվել է 30 գծ/մ 200-300մմ-անոց կոռոզիայի ենթարկված խողովակաշարեր, հնարավորություն ստեղծելով կանխել ջրակորուստները:

● Տեղադրվել են նոր էլեկտրոսնուցման վահանակներ և ջրի պղտոտությունը ֆիքսող ձայնային ազդանշանային համակարգ, որը բարձրացրել է բարձրացրել է կայանի շահագործման աշխատանքների հուսալիությունը:



Ձայնային ազդանշան



Էլ. սնուցման վահանակ

- Կառուցվել է ռեազենտ տնտեսության սենյակը և պահեստային մասը:



Polydos 412 - լուծույթ պատրաստող Սարքավորման հիմնատակի պատրաստում



Ռեազենտ տնտեսության սենյակի մուտքի դռան տեղադրում



Ոչ պիտանի խողովակաշարերի ապամոնտաժում

- Ապամոնտաժվել է ոչ պիտանի մոտ 25մ կոռոզիայի ենթարկված խողովակաշար:

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Նոյեմբերին Հանրային կապերի բաժնի կողմից Ֆեյսբուք սոցիալական ցանցի Վեոլիա Ջուր ՓԲԸ պաշտոնական էջում հրապարակվել է 24 հաղորդագրություն համակարգում տարվող աշխատանքների մասին լուսանկարաշարով: Մասնավորապես խոսքը Սիսիանում, Սևանում, Գավառում, Վարդենիսում, Արմավիրում, Դիլիջանում, Երևանում իրականացված ջրաշինարարության մասին է:



Փաստորեն գրեթե ամեն օր կայքի հաճախորդներին մատուցվել է տեղեկատվություն Օպերատորի ընթացիկ գործունեության մասին, որի միջոցով փորձ է արվել հանրության մեջ ձևավորել ընկերության կերպարը, որպես մշտազբաղ, իր գործառույթներն ակտիվորեն իրականացնող կարգմակերպության: Ավելին, հանրության համար ավելի գրավիչ լինելու նպատակով հրապարակումների ընտրության ժամանակ առավելություն է տրվել այն աշխատանքներին, որոնք կատարվել են սպառողների ահազանգերի կամ խնդրանքների հիման վրա: Ի վերջո, մեր գործի առանցքում կոնկրետ մարդն է իր կոնկրետ խնդիրներով:

Ընդ որում նշված բոլոր հրապարակումները, անկախ իրենց ծավալից, պարտադիր կերպով ներկայացվել են համապատասխան վերանագրով, որն արդեն իսկ ընթերցողին տալիս է պատկերացում բովանդակության մասին: Օրինակ «Գործին օգնեց հոսքաչափը» /Երևանի կենտրոնում ջրի կորուստը հայտնաբերելու համար



կիրառվեց հոսքաչափ/, «Ջրի հաշվառումը Արգինայում ու Շենիկում կհստակեցվի» /Արմավիրի մարզի գյուղերում տեղադրվել են ջրաչափեր/, «Օգնության եկավ ծանր տեխնիկան» /Երևանի Օրբելի փողոցի մեկ շենքի կոյուղու խցանումը բացելու համար շինարարական կազմակերպություն հրավիրվեց/, «Սիսիանը նորից դարձավ ջրառատ» /Սիսիան քաղաքում ամիսներ շարունակ առկա ջրի խնդիրը լուծվեց/ և այլն:


Այս հրապարակումներն արդյունք են Հանրային կապերի բաժնի հետ ընկերության մյուս ծառայությունների, առաջին հերթին շահագործման և տեխնիկական, ակտիվ համագործակցության, որի շնորհիվ նոյեմբերին հնարավոր է եղել ապահովել տեղեկատվության զգալի խոսք հանրապետության տարբեր բնակավայրերից: Խնդիր է դրված դեպ տեղերին ոչ միայն շարունակել աշխատել այս, իրեն արդարացրած ուղղությամբ, այլև ավելացնել Վեոլիա Ջուր ընկերության մյուս ծառայություններից, առաջին հերթին առևտրային ու սպասարկման, ստացվող տեղեկատվությունը իրենց գործունեության վերաբերյալ:

Ընթացիկ ամսվա մյուս հրապարակումների թեմատիկան ընտրելիս բաժինը հաշվի է առել դրանց.

- հրատապությունն և կարևորությունը,
- ընկերության ներքին անցուդարձը լուսաբանելու անհրաժեշտությունը,
- հանրային հնարավոր հետաքրքրությունը:

Այսպես, ֆեյսբուքյան էջում անմիջապես հրապարակվել է ՀՀ ՀՄԿՀ-ի որոշումը գործող սակագինը սպառողների համար անփոփոխ թողնելու մասին, որով կանխվել է տարատեսակ լուրերի տարածումը; հաշվի առնելով, որ վերջին ամիսներին ՀՀ Կառավարությունն ակտիվորեն խրախուսում է համայնքների ջրամատակարարման բարելավմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերը, նոյեմբերին ապահովվել է 3 հրապարակում այս մասին, տպագրվել է Երևանի «Քնար» համատիրության և Ազատամուտ գյուղի շնորհակալագիրը Վեոլիա Ջրին՝ ցուցաբերած օգնության համար; «Պաշտոնական» խորագրով անդրադարձ է կատարվել ընկերության գլխավոր տնօրենի Ժ/պ Մ. Շահինյանի և Կոտայքի մարզպետ Ռ. Պետրոսյանի հանդիպմանը, նվիրված ջրամատակարարման խնդիրներին մարզի բնակավայրերում; լուսաբանվել է Վեոլիա Ջրի մասնակցությունը ՀՀ ԱԲԸ-ի փրկարար ծառայության վարժանքին Սիսիանում; «Կենցաղային աղբը խցանման պատճառ» թեմայով մի քանի հրապարակում է եղել, որտեղ նշվել է կոյուղու խցանումից բողբոջ բնակիչների մեղավորությունը նույն խցանումների առաջացման գործում, այդ թվում Մասիս և Արարատ քաղաքներում: Ավելին, «Արմենիա» հեռուստաալիքի անդրադարձն այս հարցին օգտագործվել է Վեոլիա Ջրի տեսակետը սպառողներին ու պատկան մարմիններին հասցնելու համար:

Բնականաբար, հաշվետու ամսին շարունակվել է ընթացիկ հրապարակումները ջրանջատումների, գնումների գործընթացի, մյուս հրատապ կամ պարտադիր նման այլ աշխատանքների մասին, պարզաբանում է ներկայացվել լրագրողների հարցումների առնչությամբ, ինչպես նաև ընկերության տնօրինությանն ամենօրյա ռեժիմով շարունակվել է ներկայացվել մամուլի տեսությունը բարձրացված հարցերի վերաբերյալ օպերատիվ կերպում միջոցներ ձեռնարկելու համար:



Ջրի սակագինը կմնա անփոփոխ

«ՀՀ ՀՄԿՀ-ի որոշմամբ Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից բաժանարարներին խոսելու ջրի մատակարարման և ցրտահանում (կետաջրերի մաքրում) ծառայությունների մատուցման սակագինը 2020 թ. կմնա անփոփոխ և կկազմի 180 ՀՀ դրամ՝ մեկ մետր խորանարդի համար»:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



5.1 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Ծառայությունը մշակեց և Ընկերության Խորհրդի նիստին (“Board Meeting”) ներկայացրեց «Որակի, առողջության և անվտանգության կառավարման մասով 2019 թվականի հունվար-նոյեմբեր» հաշվետվությունը:

● Դեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի և ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարի 18.06.2015թ. թիվ 594-Ն հրամանի պահանջներով, Ծառայությունը մշակեց «Մալիշկա», «Հոպոյի Վար» քլորակայանների և «Մանթաշ» սանգոտում շահագործվող էլեկտրական վերհան/տեղֆերի տեխնիկական անվտանգության վկայագրերը և ներկայացրեց Ընկերության ղեկավարության հաստատմանը:

5.2 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

● Դեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ժբ) կետի պահանջներով, Ծառայության անմիջական համակարգմամբ «Տեխնիկական անվտանգության փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ կողմից շարունակվեցին Արտադրական Վտանգավոր Օբյեկտ հանդիսացող Ընկերության թվով 40 ԱՎՕ-ի (29 քլորակայան, 11 ամբարձիչ սարքավորում) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքները:




5.3 ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

● ՈԱԱ Ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 254-րդ հոդվածի, ՀՀ ԿԱ ջրային տնտեսության պետական կոմիտեի 17/04/2003 թվականի 047-Ն հրամանով հաստատված «Ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և ջրի մաքրման կայանների տեխնիկական շահագործման կանոնների» 65-րդ և 69-րդ կետերի, ՀՀ կառավարության 28/08/2003 թվականի 1228-Ն որոշմամբ հաստատված «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնների» 68-րդ և 77-րդ կետերի և ՎԵՈՒԲԱ ԳԲՈՒՊԻ «Աշխատանքներ փակ տարածքներում» Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներով, Ընկերության «Արևելք» և «Արևմուտք» ՏՏ-ների շահագործման տեղամասերի պետերի, վթարային խմբերի ղեկավարների և ինժեներների (76 աշխատակից) համար կազմակերպեց «Փակ տարածքներում աշխատանքներին ներկայացվող անվտանգության պահանջները» երեք մոդուլից բաղկացած կոմպլեքս դասընթաց և գիտելիքների ստուգում: Դասընթացի ավարտին տեղամասերին հատկացվեց մեկական գազաանալիզատոր և ձեռքի նմուշառման զոնդ:




2018-2019թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



* 2019թ. վերապատրաստված աշխատակիցների որոշ մասը մասնակցել է երկամսյա-եռամսյա դասընթացների: ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՖՀՄՈՒԿ հիմնադրամում կազմակերպված երկամսյա-եռամսյա դասընթացներին մասնակցել է Ընկերության 115 աշխատակից

2019թ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ մասնակցած աշխատակիցների քանակներն ըստ դասընթացների տիպերի



5.4. ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

● ՈԱԱ ծառայության պետը սույն թվականի նոյեմբերի 13-ին և 21-ին Ստանդարտների ազգային ինստիտուտում մասնակցեց «Աշխատողի առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց» ՀԱՏ ԻՍՕ 45001-2019 Ստանդարտի նախագծի քննարկման նպատակով հրավիրված «Համապատասխանության գնահատում և կառավարման համակարգեր» ՏՀ 21 տեխնիկական հանձնաժողովի նիստերին:



5.5. ՀՀ ԱԻ և ԲՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի՝ 22 հունվարի 2019թ. թիվ 21-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանը» ս.թ. նոյեմբերի 8-ին «Արևմուտք» ՏՏ «Լոռի» շահագործման տեղամասն իրականացրեց «Արտակարգ իրավիճակների ժամանակ ջրամատակարարման համակարգերում վթարի հետևանքների վերացում» թեմայով հատուկ տակտիկական ուսուսնավարժանք: ՈԱԱ Ծառայությունն այս աշխատանքներում աջակցեց «Լոռի» շահագործման տեղամասին՝ մշակելու ՀՏՈՒ-ի կազմակերպման, իրականացման և գնահատման փաստաթղթերը:


● Հիմք ընդունելով ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, Երևան քաղաքի փրկարար վարչության պետի 29.10.2019 թվականի N 12-0/133 գրությունը, նոյեմբերի 12-ին Ծառայությունը, Ընկերության «Կենտրոն» շահագործման տեղամասի հետ միասին մասնակցեց «Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում» թեմայով հատուկ տակտիկական ուսուսնավարժությանը, որի ընթացքին հետևում էր ԱԻ նախարար Ֆելիքս Յոլակյանը:



5.6. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին Անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 40 կառուցվածքային ստորաբաժանումներում և 40 ՀՏԿ-ներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում, ինչպես նաև կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2019 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին իրականացված ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՏՈՒԳԱՅՑՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ




5.7. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● ՈԱԱ Ծառայությունը, հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջները, կազմակերպեց BEATEX Շնչերությունից ձեռք բերված BW Technologies by Honeywell արտադրության թվով 50 հատ «GasAlertMicroclipX3» գազավերլուծիչի ստուգաչափման աշխատանքները:



● Ծառայությունը կազմակերպեց և իրականացրեց տեխնիկայագրում անցած թվով 19 քլորի կոնտեյների ներկման, համապատասխան նշագրման և համարակալման աշխատանքները:



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Նոյեմբեր ամսվա ընթացքում SS մասնագետների կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Մեկնարկել է նոր Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգի թեստավորման փուլը: Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգը գործելու է նոր Kaspersky Security Center 11 հակավիրուսային համակարգի կառավարման համակարգի ներքո:

- Kaspersky Security Center 11 հակավիրուսային համակարգի կառավարման համակարգում Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգի համար ստեղծված անվտանգության քաղաքականությունների և առաջադրանքների թեստավորման, ինչպես նաև Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգի ավտոմատ հեռակա տեղադրման/թարմացման համար ստեղծվել է համակարգիչների և օգտատերերի թեստային խումբ, որի մեջ ներառվել են կամայական եղանակով ընտրված, համակարգում առկա և գործող 15 համակարգիչներ և օգտատերեր:

- Kaspersky Security Center 11 հակավիրուսային համակարգի կառավարման համակարգում Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգի համար ստեղծված անվտանգության քաղաքականությունները և առաջադրանքները տրամադրվել են “Վեոլիա” Խմբի SS անվտանգության բաժնի մասնագետներին, հնարավոր անհրաժեշտ փոփոխությունների հայտնաբերման և “Վեոլիա” Խմբի SS անվտանգության կանոնակարգին, առավելագույն համապատասխանելիության նպատակով:

- Ավարտին է հասցվել Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգի թեստավորման փուլը:

- Մեկնարկել է Kaspersky Endpoint Security 11 հակավիրուսային համակարգի տեղադրման փուլը կազմակերպության բոլոր համակարգիչների և տերմինալ համակարգիչների վրա:

- Տեղադրվել են համապատասխան SPF գրառումներ veoliajur.am դոմենի համար Yandex Mail for Business հակարգում:

- Տեղադրվել են համապատասխան SPF գրառումներ yevandjur.am դոմենի համար Yandex Mail for Business հակարգում:

- 1-85 զանգերի կենտրոնի ժամային գրաֆիկի կարգավորումները փոփոխվել են՝ ըստ 1-85 զանգերի կենտրոնի ձևաչափի գրաֆիկի:

- Շիրակ և Ալավերդի տեղամասերում կատարվել են համակարգչային ցանցի մոնիտաժային աշխատանքներ:

6.1 Ինտերակտիվ համակարգ

Նոյեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ջրաչափերի փոխարինման միասնական հարթակ ծրագրային ապահովման մեջ մի շարք թարմացումներ և փոփոխություններ են իրականացվել, կապված գործընթացի ավտոմատիզացման և նոր ի հայտ եկած խնդիրների դեմ:

- Հոլոգրաֆիկ կնիքների գույքագրման գործընթացում կատարվել են փոփոխություններ, որի հիման վրա հնարավոր է կորցրած կնիքներն արգելափակել և այդ կնիքները հաշվառել առանձին:

- Կատարվել են աշխատանքներ խախտման արձանագրությունների ֆինանսական փոխհատուցման խրախուսական հավելավճարի նոր բանաձևի կիրառման նպատակով: Այսուհետ հավելավճարների ֆոնդն ավտոմատ կերպով ստացվում է Ինտերակտիվ համակարգից և փոխանցվում է հաշվապահություն յուրաքանչյուր ամսի 16-ին:

- Մշակվում է նոր ծրագրային մոդուլ գոտիավորման աշխատանքների գործունեությունն ապահովելու և ավտոմատիզացնելու ուղղությամբ: Նոր ծրագիրը թույլ կտա կապել առևտրային և տեխնիկական ջրի հաշվառումը, որի միջոցով հնարավոր կլինի, ըստ գոտիների և այլ դասակարգման, կորուստ հաշվարկել: Դեռ կատարվում են տվյալների վերաբաշխումներ և ուսումնասիրություններ՝ ծրագրի ներդրման աշխատանքներն ապահովելու համար:

- Ակտեր

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է նոյեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

<i>Իսխատման արձանագրություն</i>			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	8	12.03	2.20
Էրեբունի	16	21.79	3.64
Շենգավիթ	19	6.31	1.08
Կենտրոն	8	2.58	0.47
Արաբկիր	11	5.65	1.01
Մաշտոց	6	8.56	1.39
Շահումյան	6	7.39	1.31
Քանաքեռ-Զեյթուն	13	4.59	0.75
ՋԿԲ	71	31.72	5.46
Լոռի	5	6.50	1.09
Շիրակ	42	22.68	3.63
Արթիկ	5	1.61	0.26
Արարատ	36	4.86	0.81
Աբովյան	25	10.26	1.61
Հրազդան	23	5.23	0.92
Աշոցք	8	3.84	0.64
Ապարան	3	0.73	0.12
Արտաշատ	21	3.57	0.57
Գավառ	10	2.86	0.45
Գորիս	6	2.00	0.32
Դիլիջան	3	1.22	0.22
Եղեգնաձոր	1	0.26	0.05
Էջմիածին	12	4.09	0.69
Թալին	1	0.26	0.05
Իջևան	11	2.57	0.45
Կապան	1	0.26	0.05
Մասիս	7	2.44	0.39
Արմավիր	1	0.04	0.01
Սևան	1	0.37	0.06
Աշտարակ	21	6.05	0.97
Չարենցավան	5	1.29	0.22
Միսիան	1	0.52	0.08
Սպիտակ	1	0.13	0.02
Ստեփանավան	5	5.66	0.94
Տաշիր	1	0.52	0.08
Ընդամենը	414	190.41	31.98

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)

Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է նոյեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	13	6.17	62	0.59
Էրեբունի	14	7.91	98	0.62
Շենգավիթ	12	3.66	54	0.65
Կենտրոն	11	3.73	38	0.87
Արաբկիր	6	1.55	54	0.83
Մաշտոց	15	7.72	54	0.37
Շահումյան	10	3.54	41	0.44
Քանաքեռ-Զեյթուն	4	1.93	26	0.19
Լոռի	12	7.70	16	0.11
Ծիրակ	3	13.77	9	0.05
Արթիկ	1	0.19	0	0
Արարատ	1	2.34	5	0.12
Աբովյան	6	2.06	52	0.42
Հրազդան	5	1.35	26	0.10
Աշոցք	1	0.28	4	0.02
Բերդ	0	-	3	0.01
Գավառ	1	0.21	11	0.07
Դիլիջան	0	-	2	0.01
Եղեգնաձոր	3	1.03	28	0.17
Էջմիածին	3	1.78	19	0.14
Թալին	7	2.06	18	0.10
Իջևան	3	0.43	4	0.04
Կապան	8	2.58	22	0.11
Մարտունի	0	-	1	0.02
Մեղրի	1	0.52	1	0.00
Արմավիր	14	6.12	113	0.86
Սևան	3	0.98	1	0.01
Վայք	0	-	11	0.05
Աշտարակ	0	-	1	0.17
Չարենցավան	21	11.49	63	0.32
Միսիան	0	-	4	0.02
Սպիտակ	6	5.47	21	0.13
Ստեփանավան	1	0.26	6	0.09
Տաշիր	1	0.52	29	0.18
Ընդամենը	186	97.35	897	7.86

6.2 Այլ աշխատանքներ

● Կատարվել են փորձաքննական աշխատանքներ՝ Առևտրային տնօրինությունների խոտանման ենթակա սմարթֆոնների հետ կապված: Ուսումնասիրվել են շուրջ 80 հատ սմարթֆոն, որից, ըստ փորձաքննության արդյունքների, մոտ 60 հատը ենթակա չէ հետագա շահագործման: Կատարվել է այդ սմարթֆոնների գույքագրում և դուրսգրման փաստաթղթերի ապահովում: Առկա պահուստային սմարթֆոնների կարգաբերումների աշխատանքներ են կատարվել, որպեսզի փոխարինվեն խոտանված հեռախոսները:

● Հանրային կապերի ծառայությունների աշխատակիցների համար կազմակերպվել է դասընթաց՝ ընկերության նոր կայքի կառավարման վահանակի շահագործման ուսուցման նպատակով: Վեոլիա Գրուպը որոշում է կայացրել փոփոխել և թարմացնել իր Գրուպի կայքերի պլատֆորման, և Drupal 7-ից անցում կատարել Drupal 8-ի, ըստ որի՝ անհրաժեշտություն է առաջացել Հանրային կապերի ծառայության աշխատակիցներին ուսուցանել կառավարման վահանակի ողջ գործիքակազմին և նոր հնարավորություններին:



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am